

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ 75-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Ս/թ. մայիսի 5—7-ը Պրովիդենս քաղաքի ս. Սահակ և ս. Մեսրոպ հայոց եկեղեցում գումարվում է Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի 75-րդ տարեկան թեմական-պատգամավորական ժողովը:

Ժողովը բացվում է մայիսի 5-ին, հինգշաբթի, կեսօրվա ժամը 13.35-ին, թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսի աղոթքով: Ժողովին մասնակցում էին 88 ընտրյալ, 20 նորընտիր և 10 ծխական խորհրդի ատենապետներ (ընդամենը 118 պատգամավորներ):

Ա նիստին ս. Սահակ և ս. Մեսրոպ եկեղեցու հյուրընկալ տ. Հայկ քհն. Տոնիկյանը ողջունում է ժողովի մասնակիցներին, որից հետո տ. Կարեն քհն. Կտանյանը ընթերցում է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի՝ համագումարին ուղղված հետևյալ օրհնության գիրը, որն ունկնդրվում է հոտնկայս:

Հարգարժան և բարեջան պատգամավորներ,

Հայաստանյայց եկեղեցին հայ ժողովրդի եկեղեցին է: Հայ ժողովուրդը ինքը հայ եկեղեցին է, իբրև ինքնուրույն և անբաժան մեկ մասը Աստուծո ժողովուրդին: Եվ հայ եկեղեցին հավասարապես եկեղեցին է մեր ժողովուրդի հոգևորական և աշխարհական զավակներուն, որոնք հավասար իրավունքներով և պարտականություններով, աշխատանքի բաժին կստանձնեն պատասխանատվության տարբեր աստիճանավորումներով: Ահա այս ոգիով է որ, կխորհինք, հավաքված եք դուք այսօր իբրև պատգամավորներ թեմական-եկեղեցական ձեր կազմակերպությանց, հոգևոր իշխանությանը ներքև ձեր թեմական սրբազան առաջնորդի, քննարկելու անցնող տարվա՝ ձեր թեմի և եկեղեցիներու գործունեության արդյունքները և մշակելու հառաջիկա տարվա ձեր աշխատանքներու ծրագիրները:

Հոգեկան անհուն մխիթարությամբ կհաստատենք թե եկեղեցաշինական ծավալուն փայլուն իրագործումներեն հետո, ձեր համայնքները լծված են այժմ նույնքան կարևոր կրթական գործունեության, այսինքն դպրոցաշինական իրագործումներու, ամերիկյան բազմալեզու աշխարհի մեջ կենդանի ու վառ պահպանելու համար մեր մայրենի լեզուն և հայ դպրության ու մշակույթի լույսը, որոնք անկորնչելի արժեքներ կհանդիսանան աշխարհի քաղաքակրթության հորիզոնին վրա:

Հպարտ եղեք մեր քրիստոնեական հավատքով: Հպարտ եղեք մեր ազգային լեզվով և մշակութային արժեքներով: Այսպես է որ դուք՝ ձեր առաջնորդության հանձնված ժողովուրդը պիտի պահպանեք իր հարազատ կրոնական ու մշակութային ոգեկանությամբ, այսպես է որ ինքնուրույն վավերական արժեք և իմաստ պիտի ստանա ձեր հավաքական ներկայությունը, ձեր հայկական գոյատևումը Ամերիկայի մեջ, ուր դուք ամեն ազատություն կվայելեք նաև այդ տեսակետեն:

Այս խոհերով և հորդորներով Մենք ձեզի կմաղթենք աշխատանքի անսպառ կորով, անհահանջ հավատք և պայծառ լավատեսություն ձեր առաքելության նկատմամբ և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն ձեզի ամենուդ կբերենք Մեր սրտագին գնահատանքը և օրհնությունը հայրական:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14). ամեն:

Հայոց Հայրապետի ողջույնի և օրհնության գրի ընթերցումից հետո ժողովն անցնում է դիվանի և տարբեր հանձնախմբերի ընտրությանը:

Թեմական ժողովի դիվանի առաջին ատենապետ է ընտրվում Խաչատուր Ղազարյանը (Պրովիդենսից), որից հետո առաջնորդ սրբազան հայրը «հոգևոր» է արտասանում ընթացիկ տարվա մեջ մահացած հետևյալ պատգամավորների հոգիների հանգստյան համար.

Հայկ Գավուքճյան, Հարություն Թադոսյան, Մկրտիչ Խոլիկյան, դոկտ. Հրանտ Մարգարյան:

Այնուհետև տ. Թորգոմ արքեպիսկոպոսը կարդում է ժողովին ուղղված իր բովանդակալից ուղերձը, որը կցվել է ժողովի ատենագրությանը:

Այնուհետև, հանուն թեմական պատգամավորական ժողովի, ժողովի նախագահ և թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսը ընթերցում է Վեհափառին ուղղված հետևյալ հեռագիրը՝ խոր հարգանքով և որդիական հավատարմությամբ:

«Վեհափառ Տեր,

Հայաստանյայց եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան վիճակիս 75-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը գումարվեցավ Ռոտ Այլընտ նահանգի Փրովիդենս քաղաքի ս. Սահակ և ս. Մեսրոպ եկեղեցվո մեջ, հինգշաբթի մայիս 5-են շաբաթ մայիս 7: Պատգամավորական ժողովի Ա նիստի ընթացքին կարդացվեցավ Ձերդ Սրբության ողջույնի և օրհնության խոսքը: Ներկա ժողովականները արձանագրեցին իրենց խոր հարգանքն ու հավատարմությունը հանդեպ Ձերդ Սրբության և Մայր Աթոռ ս. Էջմիածնի: Թող Տերը միշտ անսասան ու պայծառ պահե Հայաստանյայց առաքելական եկեղեցին, և Ձերդ Վեհափառության պարգևե քաջառողջ ու արևշատ կյանք»:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, գումարվում է պատգամավորական ժողովի Բ նիստը, որը զբաղվում է մասնավորապես տարեկան ժողովի կանոնադրության մշակման, Ամերիկայում հայ պատմական հուշարձաններն ու եկեղեցիները որպես ազգային ավանդ պահպանելու, եկեղեցականների վարձատրման և այլ հարցերով:

Թեմական պատգամավորական ժողովի Գ նիստի (ուրբաթ, մայիսի 6) օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

ա) Կանադայի առաջնորդական փոխանորդի գործունեությունը.

բ) Եկեղեցականների հանգստյան թոշակի դրությունը:

Գ. նիստի ավարտից հետո ժողովի բոլոր մասնակիցները այցելում են Պրովիդենսի նահատակների նորակառույց հուշարձան, ուր առաջնորդ սրբազան հոր նախագահությամբ տեղի է ունենում հոգեհանգստի արարողություն: Նույն օրը, կեսօրվա ժամը 14-ին, գումարվում է ժողովի Դ նիստը:

75-րդ պատգամավորական ժողովի Ե նիստում, որը քննարկում էր եկեղեցու միության ուղղությամբ տարված աշխատանքները, ինչպես նաև թեմական խորհրդի ելևմտից տարեկան տեղեկագիրը, ապա 1978 թ. տեղի ունենալիք պատգամավորական ժողովի գումարման վայրի և ժամանակի հարցերը: Որոշվում է, որ հաջորդ պատգամավորական ժողովը գումարվի 1978 թ. Դետրոյտի ս. Հովհաննես Մկրտիչ հայոց եկեղեցու մեջ: Զ նիստում (մայիս 7, շաբաթ) քննարկվում է Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցում մնայուն հիմնադրամ ունենալու հարցը: Այս առթիվ որոշվում է լիազորել թեմական խորհրդին և առաջնորդ սրբազան հորը բանակցություններ վարելու **զույգ թեմերի** (արևելյան և արևմտյան) ներկայացուցիչների հետ:

Ժողովի Է նիստը զբաղվում է եկեղեցում կրոնական կյանքի և գործունեության, ինչպես նաև առաջնորդարանի և ծխերի միջև եղող փոխհարաբերությունների հարցերով:

Թեմական պատգամավորական ժողովն իր արդյունավետ աշխատանքներն ավարտում է 1977 թ. մայիսի 7-ին: